

մէկ հինգ տարեկան չուռ (դեղին սպիտակ) տղայ կուռնենայ, եդ թալան թուրանի (յափշտակել և աւերել) վախտ եդ կնիկ կփախնի, համա տըղէն իմալ կեղնի աջմներու ձեռ հէսիր կընկնի. մէկ զանգին աջամ օրտուի մէջ եդ տղէն ասքըներուց կը գնայ, Որբեվերին հերոր կյիմնայ օր ուր տըղէն հէսիր ա ընկի, զինք կը կորցու, կսկծու չը գինայ թէ իմալ էնայ:

Էտուր աղբէր թէ բարեկամ օր զէտի ազատած ա, չը թորկին էտոր դէս ու դէն գնայ, Մէկ վախտ եդհմալ տափուկ կը մնան, չուրի չորս թարաֆ կը խախնդի (խաղաղի)՝ աջմներ լէ կը դառնան յետ, կերթան. նոր կեղնին ուրանց տեղերից ու կիգան դըղ ուրանց տըներ, որը շէն, որը աւեր կը սըթրուին (պատասպարին) մէջ ուրանց տներուն, Որբեվերին լէ վախտ մի ձէն չհանայ, էդոր մարդիկ լէ գինան թէ մոռցեր ա զուր տղէն, Եդհմալ քեանի մօր կընցնի, հմէն կը միամըտին, Նագաստան մէկ սագախտան լէ կը տեսնին օր կնիկ չկայ. հուտայ հունայ կը փնտոին, էլ կնիկ հուստից ա. կերթան թաւլէն կիշկին օր, թաւլեն էն ձին օր թալնից ազատած ա, էն լէ չկայ, ձիու վըրէն մարդիկ կըյիմնան օր կնիկ ձին հեծէ ու փախէր. կընկնին գեղեր, դէսայ դէնայ (այս այն կողմ) սալխ չին կընայ հանի, թարք կիտան, կիգան:

Տեսէք թէ կնիկ լէ ինչ ա էրի. գիշեր կը յեղնի, կը հագնի մէկ ձեռք մարդու շոր, գողտուկ կը մոնի թաւլէն, ձին կը թամբայ, կը հեծնի ու եալլայ Աջամտան գո՞ր իս էկայ դըխ քըզի, Զօր ու գիշեր կերթայ, կը հասնի Աջամտան ու Աջմու զլըխով կընկնի գեղէ գեղ ու քաղաքէ քաղաք, կը հարցու թէ մէկ չուռ հէսիր մի չկայ, ինք կը գնայ (գնէ):

Հատ կը պտոտուի, սալխ մի չկընայ հանայ, մէկ օր լէ ռաստ կիգայ մէկ Աջմու մեծ գեղի, ձին կը քշայ, կը մտնի մըջ գեղին, կը կայնի մէկ մեծ դռան յառեջ ու կը հարցու թէ կը թորկին մէկ էրկու օր զօնախ (հիւր) մնայ:

Էդոր տուն տեղ կիտան, զինք լէ կը տանին յօդէն, կնիկն ա կը մտնի ներս, կը տեսնի օր հանդ ա (ահա) պղնձ մի մնով գրուկ ա մըջ բուխերկին, կէփի, հմա հոտ մէկ քիչ էդոր դուր չգար. տան տէր կառնի, կը պատմայ թէ.